ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2019 թվականի N115-Ա

«ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի N 199-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով, 67-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «ը» ենթակետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1425-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությունը՝

որոշում եմ.

1. «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 402183245 (չորս հարյուր երկու միլիոն հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 4055175 (չորս միլիոն հինգ հարյուր հիսունմեկ հազար յոթանասուն հինգ) ՀՀ դրամով՝ բաժնետոմսերի մարման միջոցով: Նվազեցումից հետո կանոնադրական կապիտալը սահմանել 398128070 (երեք հարյուր իննսունութ միլիոն հարյուր քսանութ հազար յոթանասուն) ՀՀ դրամ:
2. Հաստատել կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2007 թվականի օգոստոսի 1-ի N 199-Ա որոշմամբ հաստատված «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 398128070 (երեք հարյուր իննսունութ միլիոն հարյուր քսանութ հազար յոթանասուն) դրամ, որը կազմում է 4418 (չորս հազար չորս հարյուր տասնութ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 90115 (իննը հազար հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ:

Ընկերության բոլոր 4418 (չորս հազար չորս հարյուր տասնութ) սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են»:

3. Հանձնարարել «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ ապահովել կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

28.11.2019

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

2019թ. նոյեմբերի 28
ք. Կապան